№ 49 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 4 1891 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 4 № 49

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄՈՒԹԱՖԵԱՆ, ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒ ԵՒ ՈՐԴՈՅ հետ յաւօք սրտի յայտնելով ազգականներին և բարեկամներին, առաջինները՝ իրանց որդու և վերջինները—եղբօր

ԼԵՒՈՆ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ ՄԱՀԸ

որը վախճանվել է „Մանշ" շոգենաւի վրա և թաղվել է Սիրէ կղզում, խնդրում են ներկայ լինել՝ հոգեհանգստին, որը կատարվելու է կիրակի, մայիսի 5-ին, ցերեկվայ 12 ժամին, Քամոյեանց եկեղեցում, որը գտնվում է Դվորցովայա փողոցում:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աբեղաների անձնական սեփականութիւն,—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տուէք մեզ մարդիկ. Նամակ Ախալցխայից. Նեղքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Թեհրանի հայերը. Արտաքին լուրեր.—ԽՄՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք քրդերի մասին.

ԱԲԵՂԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Կուսակրօն հոգևորականութիւնը կազմում է մի եկեղեցական համայնք, մի միաբանութիւն, որի բոլոր ունեցածները վանքի ընդհանուր սեփականութիւն են և որի անդամներից ոչ մին ջոկ ջոկ իրաւունք չունի իսկապէս անձնական որ և է սեփականութիւն ունենալ, այլ աբեղայի ամբողջ ունեցածը, նրա մահից յետոյ, դառնում է ոչ թէ նրա ազգականների, այլ այն վանքի սեփականութիւն, որի միաբան էր նա:

Դեռ Ներսէս Մ-ի մահից յետոյ, երբ պաշտօնապէս վեր էին դրում հանգուցեալի գոյքը, Ներսէսից մնացած բոլոր փողերը և այն իրեղէնները, որոնք եկեղեցական բնաւորութիւն ունէին, ինչպէս խաչեր, անօթներ, մատանիներ՝ յատկացրին վանքին, և միայն եկեղեցական բնաւորութիւն չը կրող իրեղէններ յանձնեցին հանգուցեալի ազգականներին, Շահազիզեան ընտանիքին: Այնուհետև Մատթէոս և գլխաւորապէս Գէորգ կաթողիկոսների ժամանակ վերջնականապէս որոշված է եղել, որ վանական միաբանութեան որ և է անդամի մահից յետոյ՝ նրա ամբողջ գոյքը, նրանից մնացած բոլոր փողերն ու իրեղէնները, նրա կահ-կարասիներից, հագուստից սկսած մինչև թղթի վերջին կտորը՝ անպայման ժառանգում է վանքը: Այդ կարգադրութեան զօրութեամբ աբեղան, կուսակրօն հոգևորականը չունի ոչ մի ժառանգ, ոչ մի ազգական՝ բացի վանքից, միաբանութիւնից, որը նրա սեփականութեան միակ ժառանգն է:

Երբ հանգուցեալ Բաստամեան վարդապետը վախճանվելու վրա էր արդէն, նա ի միջի այլոց իր ծոցի ժամացոյցն ուզեց կը-տակել իր Հարազատ եղբօրը: Սակայն վարդապետի մահից յետոյ այդ ժամացոյցը, վանքի կարգադրութեամբ, չը յանձնվեց մեռածի եղբօրը, այլ յատկացվեց վանքին, հանգուցեալից մնացած բոլոր միւս իրեղէնների հետ միասին:

Էջմիածնի վանքի թանգարանի մէջ մենք տեսնում ենք ապակիներով ծածկված պահարաններում այլ և այլ թանգագին իրեր, որոնցից շատերը եթէ այնքան էլ դրամական արժէք չունեն, բայց ունեն պատմական մեծ նշանակութիւն. այդտեղ կը տեսնէք դիցուք մի եպիսկոպոսական խաչ, որը կրում էր Եփրեմ կաթողիկոսը, մի մատանի, որը պատկանում էր Ներսէս կաթողիկոսին, ապա կաթողիկոսական գաւազաններ, որոնք պատկանում էին Ներսէս, Մատթէոս, Գէորգ կաթողիկոսներին և այլն, և այլն....

Մի խօսքով հոգևորականների ամբողջ սեփականութիւնը, լինէր դա դրամ թէ իրեղէն,—բոլորն էլ նրանց մահից յետոյ պիտի անպայման վերադարձվի վանքը, դառնայ հոգևոր համայնքի, կամ ինչպէս սովորութիւն ունենք ասելու՝ ազգի մշակութենաւոր սեփականութիւն:

Այդ պատճառով, եթէ այս բօպէիս մի որ և է Հաջի-Յակոբ, կամ մի այլ ոք, կաթողիկոսի մահից յետոյ, հաւատացնում է թէ այսքան դրամ, կամ այս ու այն առարկայ կաթողիկոսն իր մահից առաջ՝ սրան նրան է յատկացրել,—այդ տեսակ ցուցմունքը որ և է օրինական կշիռ ունենալ չէ կարող և իրաւաբանական տեսակէտից կատարելապէս սխալ և ապօրինի պիտի համարվի, մանաւանդ որ վանական սեփականութիւնը հանգուցեալ կաթողիկոսը երբէք չէր կարող իր կամքով ընծայել մի մասնաւոր մարդուն:

Կուսակրօն անձը սեփականութիւն չունի, այլ իր ունեցածը կարող է վայելել միայն իր կենդանութեան ժամանակ, ուրեմն իրաւունք էլ չունի իր մահից յետոյ կտակել փող թէ իրեղէններ մասնաւոր անձանց: Միաբանութեան իրաքանչիւր անդամի ամբողջ սեփականութիւնը, ամենավերջին աբեղայից սկսած մինչև ամենայն հայոց կաթողիկոսը, նրանց մահից յետոյ անպայման պատկանում է ամբողջապէս միաբանութեանը, վանքին, հոգևոր համայնքին, կրկին դառնում է վանական հաստատութեան, այսինքն ընդհանուր ազգի մշակութենաւոր սեփականութիւն:

Այդ պատճառով այն իրողութիւնը, որ կաթողիկոսի մահից յետոյ նրա թողած դրամը կամ որ և է իրեղէնը կարող են գտնվել մասնաւոր անձանց, նոյն իսկ ազգականների ձեռքում,—իրաւաբանական տեսակէտից պիտի նկատվի որպէս պարզ և բացարձակ յափշտակութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՈՒՆԷՔ ՄԵԶ ՄԱՐԴԻԿ

—

Եթէ բիբլիական դարերը վերադառնային, երկինքը բացվէր, և ամպերի միջից մի ձայն գոչէր. «Ի՞նչ էք կամենում ձեր հասարակութեան համար ասացէք, և ամեն բան կը տանաք», առանց տատանվելու կը պատասխանէինք՝ «մի քանի դիւժին լաւ մարդիկ, և ուրիշ ոչինչ»:

Ինչպէս թէ ուրիշ ոչինչ, բայց միթէ մեր հասարակութեան պակասաւոր կողմը միայն լաւ մարդիկն են, գուցէ զարմացած կը հարցնի միամիտ ընթերցողը:

Այո, միայն լաւ մարդիկ: Մի մի անդամ մարդու չուրջը միմեանց վրա այնպիսի զարդերի դէպքեր են տեղի ունենում, այնպիսի քաջամենի իրողութիւններ են պատահում, մարդիկ այնքան սատանանում և իրանք իրանց մոռանում են, որ ինչքան էլ փայլուն յոյսեր չունենայինք, ինչքան էլ չը հաւատայինք մարդկային խղճին, ապագային, ինչքան էլ չաշխատէինք բարձր ճգտումներով ոգևորվել, այնու ամենայնիւ, մեր ունեցած հաւատը, յոյսը, համոզմունքը սկսում է մեզ դաւաճանել, մարդ սկսում է կորցնել իր հաւատը, յոյսը, և նրա լեզուն ակամայ մրմնջում է. «Միթէ մի երկու լաւ մարդ էլ չէ մնացել»:

Ցուսահատվելը, ողբը, հիասթափումը ծերերի յատկանիշն է. երիտասարդ հասակում մարդ պէտք է հաւատայ, առաջ գնայ և երբէք չը յուսահատվի: Այդ ճշմարիտ է: Բայց երբ կեանքի մէջ, ներսը, դուրսը, փողոցում, հրապարակի վրա, միմեանց ետևից երևան են գալիս մէկը միւսից աւելի կեղտոտ, մէկը միւսից աւելի ստոր գործեր, անարժան, իրանք իրանց վաճառող, ամեն սրբութեան մէջ միայն իրանց չարը որոնող արարածների ձեռքով,—այն ժամանակ երկաթէ կամքն էլ չէ կարողանում դիմանալ, և լեզուն կրկին մրմնջում է. «միթէ մի երկու լաւ մարդ չէ մնացել»:

Ականջ դրէք: Տեսնում էք, ճշմարտութիւն է քարոզում. հրաւիրում է օգնել խեղճերին, տառապեալներին, աջ և ձախ շանթեր է արձակում սառնասիրտ, իրանցով միայն զբաղված մարդկանց վրա: Ո՛հ, ինչքան գեղեցիկ է դրսից: Բայց սիրտ արեցէք, պատուեցէք նրա դէմքի դիմակը, լաւ նայեցէք, և տեսէք թէ նա քանիներին է խաբել, յափշտակել, քանիների աչքին թոզ փչել, ոտի առաջ փոս փորել:

Կարդացէք, տեսնում էք ինչեր է գրում. որքան սրտայաւութիւն հասարակութեան մասին, որքան վիշտ և կսկիծ դէպի հասարակութեան դժբաղդութիւնները, վշտերը. տառապեալներին օգնելու համար հրաւէրներ է կարդում, հանգանակութիւններ է անում, արդօսի աչքաբացութեամբ հասարակական շահերի պաշտպան է ձևանում.... Բայց պատուեցէք վարագոյրը, տեսէք նրա սեփական կեանքը. որքան դոյութիւններ, խաբեբայութիւններ, որպիսի ուստայութիւն՝ միամիտներին խաբելու և ադռաւի փոխարէն սիրամարդ երևալու: Ասացէք, կարող էք երևակայել, թէ այդպիսի հրէշ է այդ սերեսը, և այդքան գաղիր....

Տեսէք, իրան հասարակութեան է նուիրել, հասարակութեան է ծառայում: Այդպէս է գոչում նա աջ և ձախ. այդպէս է հաւատացնում այնտեղ, այստեղ, ամեն տեղ: Բայց մի քիչ ուշադիր եղէք, ականջ դրէք լսող ձայներին՝ տեսէք քանիսին է չփոթեցրել, տեսէք ինչ է ասել երէկ և ինչ է ասում այսօր. տեսէք՝ այդ զզուելի արծաթասէր, թողնում են իրանց մինչև այդ օրը բնակված գաւառը և անհետանում են մի ուրիշ հեռաւոր տեղ: Իսկ այդպիսի մի քիւրդին ճանաչել ու գտնելն անհնար է: Ոչ միայն մի գաւառից դէպի մի ուրիշ գաւառ տեղափոխվող քրդին դժուար է ճանաչել, այլ և մի լեռան լանջից մօտակայ սարի ստորոտը փոխադրվող քրդին գտնելը շատ դժուարութիւններ է պահանջում...

Քրդին խաչնարած վարձելու միջոցին, անատնատէր դիւղացին, ինչպէս մեր յօդուածի սկզբում յիշեցինք, չէր պահանջում նրանից ոչ անցագիր, ոչ վկայական և ոչ մի որ և է գրաւոր պայման: Սակայն վերջերս հանգամանքները փոխվեցան. վերջին տարիներս չօպանութիւն անելու համար վարձելիս՝ քրդերից պահանջում էին կանոնաւոր անցագիր և շատերից գրաւոր պայման և մինչև իսկ երաշխաւոր: Պատճառները, կարծում ենք, բացատրութեան կարօտ չեն:

Մեր յիշած գաւառներում կան նաև այնպիսի քիւրդ չօպաններ, որոնք օգտվում են իրանց ազգաների նոյն իսկ հողագործութեան բաժնից: Օրինակ, քիւրդը մի ընչին վարձով գնում է մի աղքատ գիւղացու մի կտոր վարելահող և իր բարեսիրտ աղայի աջակցութեամբ ցորեն կամ գարի է ցանում՝ իր ընտանիքի ձմեռվայ պաշարը պատրաստելու համար: Ցայտնի է, որ քիւրդը ոչ լծկան ունի և ոչ էլ վարել—ցանելու համար որ և է գործիք, որպէս զի ինքն իր ցանքն անի, այլ նրա համար գրեթէ ձրիապէս ցանում է իր աղան, որն իր հաւատարիմ հովուի «խաթրը» շահելու համար պատրաստ է յանձն առնել ամեն մի դժուարութիւն...

Ի դէպ պէտք է նկատել, որ քիւրդ ընտանիքը աղքատութիւնից ստիպված թէև տարիներով կամ տասնեակ տարիներով բնակվում է մի որ և է օտար տեղում, հեռու լինելով միանգամայն իր ցեղակիցներից,—բայց և այնպէս այդ նոյն ընտանիքը երբէք չէ մոռանում իր ցեղակիցներին, ազգականներին և բարեկամներին, որոնք մնում են իրանց սեփական հողի վրա և երբ այդ քիւրդ ընտանիքը, բաղդի բերմամբ, նիւթապէս ապահովվում է, այսինքն բաւական անասունների տէր է դառնում,—այն ժամանակ իսկոյն բարձում է իր դրաստին իր չարժական տունը և «քօչում» է դէպի իր նախնական բնակավայրը:

Թափառական քիւրդ ցեղերի շրջաններում աչքի է ընկնում «բրուկի» կոչված հասարակութիւնը, որն իր առանձին յատկութիւններով զանազանվում է միւս հասարակութիւններից: Քիւրդ ամբոխը, ընդհանրապէս, ինչպէս փաստերը ցոյց են տալիս, թէև ընտանեաբար շատ մօտ է հայերին, բայց և այնպէս յիշեալ «բրուկի» հասարակութիւնը, հայերի հետ սերտ բարեկամական յարաբերութիւն ունենալու կողմից՝ առաջին տեղն է բռնում, թէ իր քրդական արժանաւոր յատկութիւններով, թէ տոհմական-սկզբնական ծագումով և թէ ցեղական-նախնական ինստինկտով, քան թէ «բաղրկի», «գաղուրի» և այլ ուրիշ հասարակութիւնները...

Այդ քիւրդ հասարակութիւնները ձմեռն անց են կացնում Բռուղան անուանված քրդաբնակ տեղը, ուր հիմնված են բազմաթիւ առանձին-առանձին թանվայական քրդական գիւղեր: Որովհետև քրդերի երկու որոշ թանվաներ անկարող են միասին բնակվել, այդ պատճառով նրանց թէ ձմեռվայ բնակավայրերը և թէ իւրդերը՝ ջոկ-ջոկ են: Ուրիշ խօսքով՝ «փիրկցի» և «բաշկրցի» թանվաները, որքան էլ որ կամենան նրանք, դարձեալ անկարող են միատեղ ապրել, ուստի նրանցից իւրաքանչիւր թանվայի թէ գիւղը և թէ արօտատեղը՝ բաժանված են միմեանցից: Բռուղանում նրանք բնակվում են եղեգնեայ վանդակներում, որոնք ծեփված են լինում կաւով և ողորմելի խրճիթներում: Ասում են, որ այդ փոքրիկ խրճիթներից շատերը տարի չէ լինում, որ չը քանդվեն և կրկին չը շինվեն...

Քիւրդ ցեղերի մասին խօսելով, չէ կարելի լռութեամբ անցնել նրանց տոհմական-ծառայական թշնամական ցոյցերի և արտայայտութիւնների մասին, որոնք շատ հետաքրքիր են և մի և նոյն ժամանակ ունեն բարբարոսական հետևանք-

ղմղդրաբլեաշ։ Ազգրվթաղոիվտոս և բրահնեթի
ենինդաս՝ Ամդդան վմդդտգնս վդոմծ վր ո մդդ-
-բիտղոդ վիմդդդոմտբտ ո վմդդտաբջիոոբ՝ վմդդ-
-նասիոբ վիոդդոմտբտ՝ Ամդդ ոմոմ ոմոմ նգտ նգտ ֆոդ
-տրոմտ տոմով վիոմենվեոս ղվն կոմի Ամդդբիտղոմով
՝բրիտմոմոտատ մն ղոդբրանդոբ բրամդոս Ֆոմդ
վիտոշ Ամոնեոմ—ղոմիոշ։ բրատղտ մնեոմոբաբ
ո բրատնբտաբի մդոբ բիոմենի—
հոդոմն ՝ճբն վենանբ ոդ բրատբրիբի Ամդդիոտ-
-տոբտոմ։ Ազբրանդոշ բիոմենի մդոբ ոդ բրատ-
-ոբ ոմոմ ոդ բրատ Ամդդոտ-ոբ։ Ամդբանն
՝ճբն վենանբ ոդ բրատ՝ բրատ՝ ոդ՝ ոդոմ՝ ոդ՝ ոդ՝ ոդ

համար բղխեցնի մի փոքր սէր դէպի մայրենի թատրոնը…

—

Թիֆլիսի Միքայէլեան փողոցի վրա՝ նախկին «Ընտանեկան այգում» սկսվել են օպերետտային ներկայացումներ ռուսերէն լեզուով։ Այդ թատրոնը այժմ անուանվում է «Պուշկինի թատրոն»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Լոյս տեսաւ ռուսերէն լեզուով Ֆրանսիացի Էրկման-Շատրիան հեղինակների «Лѣсничій Фридрихъ» գեղեցիկ վէպը, որի նիւթը վերցրած է Էլզաս-Լոթարինգիայի կեանքից։ Ժողովրդի կեանքը գեղեցիկ նըկարագրող այս վէպը կարդացվում է յափշտակութեամբ։ Արդէն ձեռնարկել են այդ նոյն վէպը հայերէն լեզուով թարգմանելու։ Թարգմանութիւնը շուտով մամուլին կը յանձնվի»։

—

Պարիզում հայ չքաւոր ուսանողների օգտին տուած պարահանդէսի առիթով ստացանք Եագոր Մարտինիչ Յակոբովից 3 ռուբլի 50 կոպէկ։ Նախկին 153 ր. 40 կ. դումարի հետ անում է 156 ր. 90 կոպէկ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Արտասահմանի հայոց լրագիրներում կարդում ենք.

«Կ. Պոլսի Քաղաքական Ժողովն իր վերջին նըստի մէջ զբաղվեց նաև հետևեալ խնդրով. «Կարնոյ գաւառական վարչութեան խառն ժողովն առաջնորդի ընտրութեան հրահանգ խնդրած և միւս կողմէ վիճակին պատրիարքական փոխանորդ Գեր. Ղեոնդ եպիսկոպոս Շիշմանեան՝ հրաժարելով Քարբերդի առաջնորդութենէն և լրացեալ համարելով իւր Կարին ունեցած պաշտօնը, անօրինութիւն խնդրած էր։ Ժողովն որոշեց պատասխանել Ն. Գերապատուութեան, թէ այդ խընդիրներ վերապահուած ըլլալով խառն ժողովոյ անօրինութեան, յետ Զատկի կրնայ նկատողութեան առնել զայնս, թէ նոյն իսկ խառն ժողովոյ նախորդ մէկ որոշմամբ առաջնորդի ընտրութիւնն առ այժմ յետաձգել պատշաճ դատուած և այդ որոշումն արդէն իրեն ծանուցուած և յանձնարարուած ըլլալով սպասել Կեդրոնական Վարչութեան անօրէնութեան, կը պարտաւորի շարունակել իւր պաշտօնը մինչև որ պարտուպատշաճը տնօրինուի»։

Կ. Պոլսի լրագիրներում տպագրված է կրկին անգամ հետևեալ պաշտօնական գրութիւնը.

«Ինկիւրիէն, Տիարպէքիրէն, Քարբերդէն, Տրապիզոնէն, Բաղէշէն և Ատանայէն ապրիլ 7 և 8 թուականներով եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ այդ նահանգաց մէջ ևս, շնորհիւ վեհ. Սուլթանին, կատարեալ ապահովութիւն ու անդորրութիւն կը տիրէ։»

«Ռուսական դեսպանուհի տիկին Նելիտոֆ լսմանալով, որ պ. Աղամեանի հիւանդութիւնը բարւոքած չէ տակաւին, երեքշաբթի օրը ռուսական հիւանդանոցն երթալով երկրորդ այցելութեամբ մը պատուեց և սփոփեց հայ ողբերգուն։ Բեղրպուրկի լրագիրք գոհութեամբ կը յիշատակեն Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան՝ պ. Պ. Աղամեանի նկատմամբ ցոյց տուած հոգածութիւնն ու համակրանքը»։

«Իւր երգիծաբան գրչով հանրածանօթ մեծ. Յակոբ էֆէնտի Պարոնեան, որ քանի ամսէ հետէ հիւանդ էր, այժմ անկողնոյ կը ծառայէ և կը գտնուի բժշկաց ձեռամբ։ Պարոնեան էֆէնտի, իւր երկարժամանակեայ հրապարակագիր, իւր արդի հիւանդագին կացութեան մէջ մանաւանդ արժանի է գրասէր և բարեսէր ազգայնոց հոգածութեան և ամենայն համակրանաց։»

«Արևելք» լրագիրը հաղորդում է. «Կը լսենք թէ Մարկոս էֆ. Աղաբեկեան՝ Ազգ. Մատենադարանին տեսուչ պիտի անուանուի»։

ԹԷՀՐԱՆԻ ՀԱՅԵՐԸ

—

Արտասահմանի հայոց լրագիրներից քաղում ենք հետևեալը. «Պարսկաստանի մայրաքաղաքում, Թէհրանում կայ 200-ից աւելի տուն հայ ընտանիք՝ լուսաւորչական և աւետարանական, որոնք բոլորն էլ գաղթականներ են եկած Թաւրիզից, Համատանից, Ղարադանի գիւղերից, Խաբանից, Ղարաբաղից, Պոլսից և այլն քաղաքներից։ Հայերի կէսը պարապում է շիրաչիութեամբ, խմիչք վաճառելով. մնացածի մեծ մասը արհեստաւորներ են, դերձակներ և ոսկերիչներ. իսկ միւս մասը վաճառականներ և ծառայողներ թէ արքունական և թէ հասարակ։

«Հայերը ցրուած բնակվում են քաղաքի զանազան մասերում. բայց գլխաւոր կենտրոններն են Դարվազէ, Ղազվին ուր բնակվում են 125 տուն. ունեն մի եկեղեցի, երկու ուսումնարան միմեանց կից արական և իգական սեռերի համար. վերջինս մօտ երկու տարի է որ չինվել է, և մի ընթերցարան Հայկազեան վարժարանում։ Դրանից աւելի փոքր մասը բնակվում է Դարվազէ-Շահ-Աբդիւլ-Ազիմի թաղում մօտ 50 տուն. ունեն միայն մի փոքրիկ եկեղեցի։ Իսկ ամենափոքր մասը՝ մօտ 30 տուն, բնակվում է քաղաքի ամենաընտիր թաղում, Դարվազէ-Դավլաթում. սոքա չունեն ոչ եկեղեցի և ոչ որ և է ազգային հիմնարկութիւն. (մտադիր են և աշխատում են ունենալու)։ Այս թաղի Հայերը Շահ-Աբդիւլ-Ազիմ եկեղեցու ծուխ են համարվում և այստեղ են գնում աղօթելու։ Թէ Հայերի ցրված լինելը որքան վնաս է ընդհանուր շահերին, այդ շատ պարզ է և յայտնի, որով ոչ եկեղեցին է օգտվում և ոչ ազգային ուսումնարանը և ոչ ընթերցարանը. շատ պարզ է, որ ցրուած ոյժերը դժուարութեամբ են միանում, նա մանաւանդ երբ չը կայ դոցա մէջ սէր։ Թէհրանի հայ հասարակութիւնը՝ ինչպէս վերը յիշեցինք, գաղթած լինելով զանազան քաղաքներից, տարբեր վարքուբարքի և սովորութիւնների տէր, շատ դժուարութեամբ են միմեանց հասկանում. մէկի լաւ սածը միւսի հակառակ է երևում։ Արդի բոլոր ազգային հիմնարկութիւնք անանխանձելի են. այս բանից օգտվելով կաթոլիկներն և բողոքականներն մեծ յաջողութեամբ շահվում են, զբաղոցները լցնելով հայ մանուկներով. պէտք է խոստովանել որ ցաւալի վիճակ է և ամօթ մեզ որ մեր որդիք օտարազգիք պէտք է կրթեն։»

Հաղորդելով այդ տեղեկութիւնները, արտասահմանի հայոց լրագրի թղթակիցն աւելացնում է. «Այժմ ջանքեր են լինում դպրոցը բարեկարգելու. իսկ մեր բողոքական եղբայրներից, որոնց համար նոյնպէս թանգ են ազգային ամեն մի յառաջադիմական քայլերը, ինչպէս որ շարունակ խօսվում և գրվում է, չի նկատվում որ և է համերաշխութեան նշոյլ, թէև կրօնական խտրութիւն չը կայ մէջտեղ. «Գործք առանց հաւատոյ մեռեալ են»։ Շատ ցանկալի և նպաստաւոր կը լինէր, որ իւրեանց որդւոց փոխանակ կոյսերի և այլոց դպրոց ուղարկելը, ուղարկէին հայոց, իւրեանց եղբարց դպրոցը և մատով գոնէ օգնէին դրան։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վատիկանի գլխաւոր ճարտարապետը Լեոն XIII պապին ներկայացրել է Պոցցօ-Պուրտալէսում վառօդի պահեստի պայթիւնից պատճառած վնասների ցուցակը։ Չը հաշուելով պայթիւնից փչացած գեղարուեստական առարկաների գները, Վատիկանի ներքին շինութիւններին պատճառած ջնասները հասնում են մօտ 500,000 ֆրանկի։ Ս. Պետրոսի տաճարի ջնասված մասերի նորոգութիւնը կը նստի 300,000 ֆրանկ. ս. Պողոսի մատուռի նորոգութիւնը գոնէ կէս միլիոն ֆրանկ կարժենայ. կրկին կէս միլիոն ֆրանկ կը հարկաւորվի հռոմէական բազմաթիւ եկեղեցիների վնասված տեղերը նորոգելու համար։ Նոյնպիսի մի գումար կը պահանջվի «Vigna-Pia» անուն կրող պապի երկրագործական դպրոցի համար։

—Լոնդոնի դիպլոմատիական շրջաններում լուր է տարածվել, որ իբր թէ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների մէջ կարծիքների փոխանակութիւն է տեղի ունեցել բուլգարական հարցի առիթով։ Հաւատացնում են, որ Իտալիան դադարել է Աւստրիային օգնելուց և մօտեցել է Ռուսաստանին։

—Բելգրադից գրում են, որ այնտեղի կանանց մի խումբ պատրաստվում է ուղարկել Նատալիա թագուհու ծննդեան օրը և դրանով յայտնելու իրանց համակրութիւնը թագուհուն։

—Սոֆիայից հեռագրում են, որ պրինց Ֆերդինանդ, մօտ ժամանակներս ուղևորվելու է արտասահման՝ քաղաքական գործերով։

—Վիէնայի մի քանի լրագիրներ հաղորդում են, որ սերբիական կառավարութիւնը մտադրվել է դիմել Նատալիա թագուհուն՝ առաջարկելով նրան ութ օրում դուրս գալ Սերբիայի սահմաններից։

—Լուր կայ, որ հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահը մտադիր է դիմել Անգլիային և եւրոպական ուրիշ պետութիւններին՝ խնդրելով միջազգային կոնֆերենցիա գումարել, որը զբաղվէր հրէաների Պալեստինա գաղթելու հարցով, իբրև նրանց նախահայրերի հայրենիքը։ Նախագահին խնդրել է այդ բանն անել, հրէաներից և քրիստոնեաներից բաղկացած այն ժողովը, որ նորերս գումարվել էր Զիկագոյում։

—Աթէնքից գրում են արտասահմանի լրագիրներին հետևեալը. «Հակառակ արտաքուստ երևեցած բարեկամական յարաբերութիւններին, որոնք այժմ կան Բ. Դրան և Աթէնքի կառավարութեան միջև, յոյն թերթերի լեզուն օրըստօրէ աւելի կծու կը դառնայ Թիւրքը կառավարութեան դէմ, մանաւանդ երբ վերջերս Թիւրքիան արգելք դրաւ որ այլ ևս յոյն նաւատիներ չը կարենան Փոքր-Ասիայի և Ափրիկեան Տրիպոլիսի ծովեզերքներէն սպունգ որսալ։»

—Իշխան Ֆերդինանդի և Ստամբուլովի մէջ նշանաւոր տարաձայնութիւններ ծագեցան։

—Անգլիական «Daily Telegraph» լրագիրը հաղորդում է, որ Իտալիան սարքադրել է երեքպետեան դաշնագրութեան պայմանները առաջիկայ հինգ տարվայ համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երբ որ հռոմայեցի զօրավարները, թշնամուն յաղթելուց յետոյ, վերադառնում էին պատերազմի դաշտից, յայտնի է, որ նրանց գլխները զարդարում էին դափնեայ պսակներով։ Հին հռոմայեցիների այդ սովորութիւնից Վիլհելմ կայսրը օրինակ առաւ և հրամայեց մի այդպիսի պսակ պատրաստել կոմս Մոլտկէի համար։ Այդ պսակը հիւսված էր դափնեայ թարմ տերևներից և զարդարված էր բնական և ոսկէ ծաղկեայ կոկոնների, և նոյնպէս ոսկէ տերևներով։ Պսակը այնպէս մեծ էր, որ յարմար եկաւ հանգուցեալ կոմսի սաղավարտին, որի վրա և դրեցին պսակը։

* * *

Վէյմարում բնակվող գերմանացի կանանց ընկերութիւնը դիմեց ռէյխստագին մի խնդիրքով՝ թոյլ տալ Շվէյցարիայում բժշկական դիտութիւններն ուսած գերմանացի կանանց բժշկական քննութիւն տալ գերմանական բժշկական յանձնաժողովի առաջ։

* * *

Թանգագին մարդիկ։ Աշխարհիս երեսին իրանց կեանքը թանգ գնահատող և ապահովագրող անձինք սրանք են. կոմս Դուդլէյ, անգլիական ամենահարուստ արիստոկրատներից մէկը, ապահովագրել է իր կեանքը 1,200,000 ֆունտ ստերլինգով, ապա վանամակերն է, որը պօստային դիրեկտոր է Միացեալ-Նահանգներում, տասը միլիոն բուբլով է ապահովագրել իր կեանքը, իսկ Ռէլսի իշխանը իր կեանքը ապահովագրել է 650,000 ֆունտ ստերլինգով։

* * *

Բարկութիւնը վատ խորհրդատու է, ասում է առածը։ Պատկերահանդիսի օրը Պարիզի Ելիսեան դաշտերի Սալօնում մի քանդակագործ, դժգոհ լինելով, որ իր «Ապագայ դար» անունով արձանը չեն տեղաւորել իր ցանկացած տեղում, կոտրեց իր ստեղծագործութիւնը իր սեփական փայտով հասարակութեան ներկայութեամբ։

* * *

Պարիզի թատրոնական յայտնի կրիտիկոս Ֆրանսիսկ Սարսէ այս օրերս պսակվեց Իւլիա Թէրէզա Կարբոնարի անունով մի օրիորդի հետ։ Սարսէ այժմ 64 տարեկան է. նա իր կնոջից 30 տարով մեծ է։

* * *

Արտասահմանեան մի հայոց լրագրում գտնում ենք հետևեալ թուանշանները, որոնցից կարելի է եզրակացնել թէ ինչքան ժամանակ գոյութիւն ունեն հայերը.

«Ազգային պատմութեան ծանօթ դասագրքեր և մի շարք նոր ձեռնարկներ 4383 կը դնեն Հայոց թուականը, Բելի սպանուելէն ի վեր և 4335 տարի, Հայկի մահէն ի վեր։ Հայր Ալիշան որ այս խնդրի մասին մի գլխաւոր հեղինակութիւն կարելի է համարել, իր «Ցուցիկ»-ի մէջ գրած «Հայկայ շրջան» յօդուածի մէջ նոյնը կը հաստատէ։ Ահա այդ մասին Հայր Ալիշանի մէջ բերած բացատրութիւնը. Հայերը անշարժ (ազգային-կրօնական) և շարժական (քաղաքական) տոմարներ ունեցած են հին ատենները, մեր տոմարի նորոգութենէն (553 Ք. Ե.) առաջ։ 1460 տարին մի անգամ այդ երկու թուականների տարեգլուխներն ալ տարուան միևնոյն օրը կը պատահէին, քանի որ շարժական տարին պարզապէս 365 օր կը հաշուէր, մինչդեռ անշարժ տարին մի օր նահանջ կունենար, 4 տարին անգամ մը։ Արդ Քրիստոսի 428-դ տարին այս երկու տարեգլուխներն ալ միևնոյն օրը, օգոստոսի 11-ին, պատահած են. անկէ առջի հանդիպումն եղած է հեռապէս Քրիստոսէ 1032 տարի առաջ, որով և պիտի հաշուենք թէ ամենէն առջի հանդիպումն ալ 2492 թուին (Ն. Ք.) եղած է, քանի որ Քրիստոսէ առաջ հայկական տօնացոյցի կամ տոմարի փոփոխութիւն մը կամ բարեկարգութիւն մը չը յիշուիր, նոյն իսկ Վաղարշակ ալ, (ինչպէս կըսէ Խորենացին), տոմարի մասին կարգադրութիւն մը չըրաւ։ Արդ Քրիստոսէ առաջ ունինք 2492 տարի և անկէ ետք ալ 1891, որով այժմ 4383-դ տարուան մէջ ենք մեր հայկական շրջանի»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մայիսի։ Պետական կալուածական բանկի դրաւական թղթերի կատարված տիրաժում գլխաւոր տարած գումարները.

№ սերիայի	№ տոմսի	Գումարը	№ սերիայի	№ տոմսի	Գումարը
4,497	8	200,000	1,688	16	1,000,000
9,795	6	75,000	13,062	29	
14,721	36	40,000	7,376	11	
5,860	18	25,000	8,748	13	
14,123	9	10,000	12,889	41	
10,935	46	10,000	4,174	24	
6,244	8	10,000	7,602	6	
15,898	17	8000-ական	1,629	15	
867	42		13,574	16	
4,152	18		1,556	39	
256	33		9,964	6	
9,850	41		14,878	39	
4,209	41	5,000-ական	13,076	45	
4,892	26		7,055	14	
2,762	14		15,594	32	
8,728	45		15,454	30	
2,312	45		5,320	41	
9,527	45		9,644	40	
8,560	14		14,517	1	
7,758	13		2,331	40	

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մայիսի։ Այսօր Խահակեան և Կաղանեան տաճարներում և Պետերբուրգի շատ եկեղեցիներում կատարվեցան գոհացողական մաղթանքներ, թագաժառանգ Ցեսարեվիչի վտանգից ազատվելու համար։

ՊԱՐԻԶ, 1 մայիսի։ Այստեղի լրագիրները զայրոյթով են խօսում Օտսուի մէջ թագաժառանգ Ցեսարեվիչի կեանքի դէմ արած փորձի առիթով։

ԼՕՆԴՈՆ, 1 մայիսի։ Եօկոհամայից այսօր ստացված հեռագիրը հաղորդում է, որ թագաժառանգ Ցեսարեվիչի կեանքի դէմ, Օտսուի մէջ, փորձ անողը մի ֆանատիկոս է, Կիոտոից տեղացի մի ոստիկանակնծառայող։ Դանդը վիրաւորված է. վէրքը ծանր չէ։ Չէնց որ սպանութեան փորձի լուրը հասաւ Եապօնիայի մայրաքաղաքը, իսկոյն Միկադոն ուղևորվեց Կիոտո։ Շանխայից «Standard» լրագրի ստացած հեռագրին նայելով, թագաժառանգ Ցեսարեվիչ գնում էր Օտսու՝ տեսնելու այն նշանաւոր զբօսավայրի գեղեցկութիւնները, որը գտնվում է Բիվա-Ումիի վրա, Կիոտոյից 6 մղոն հեռու։ Ցանցաւորը եապօնացի է, Տուդա-Սանցօ անունով։ Նա ոստիկանական ծառայող է։ Թագաժառանգ Ցեսարեվիչին նա խփեց թրով՝ ուղղակի գլխին։ Որ յանցաւորը նպատակ ունէր սպանել՝ կասկածել չէ կարելի։ Բայց, հաւանօրէն այն պատճառով, որ թագաժառանգ Ցեսարեվիչի գլխարկը հաստ և ամուր էր, վէրքը, բարեբաղդաբար թեթև էր։ Ասում են, որ վէրքը մի փոքրիկ չանգռուածք է, որը գոյացել է ճակատի վրա, և ծանր բնաւորութիւն չունի։ Կարծիք չը կայ ասելու, որ Միկադոն և նրա մինիստրները վերին աստիճանի վրդովված են ցանկալի և շատ յարգելի հիւրի դէմ արած այս ամօթալի փորձի պատճառով։ Իսկ ինչ վերաբերվում է այն բանին, թէ ինչ յարաբերութիւն ունի այդ դէպքը եապօնական ազգի ընդհանուր տրամադրութեան հետ, պէտք է ասել, որ դա մի վերին աստիճանի տխուր պատահմունք է։ Ենթադրում են, որ յանցաւորը խելագար է. հաւանօրէն, նա զայրացած էր իր դէմ եղած որ և է անարդարութեան պատճառով և բարձր հիւրի պատահական ներկայութիւնը նրան դրդել է դէպի չարագործութիւն։ Միկադոն և մինիստրները անյապաղ ուղևորվեցին Կիոտո, որպէս զի ցաւակցութիւն և համակրութիւն յայտնեն այդ դէպքի առիթով, այլ և ուրախութիւն, որ վտանգն անցաւ։ Կարելի է առաջուց ասել, որ թագաժառանգ Ցեսարեվիչ, չը նայելով այդ անախորժ դէպքին, այնու ամենայնիւ իր հետ վատ տպաւորութիւն չէ դուրս բերել՝ եապօնական սիրալիր ընդունելութեան վերաբերմամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Պաշտօնական։ Թագաժառանգ Ցեսարեվիչ կատարելապէս առողջ է։

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Мая 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. части на Кавказѣ, Дорога-Меликовская ул., д. 232.

ԿԱՅՔ ԱՇԽԱՐՀԻ

Ամենաարագ ոգեշունչ և գեղեցիկ գրիչ, գունեղ գրագիր և գունագեղ նկարիչ

Ամենաարագ ոգեշունչ գրիչ, գունեղ գրագիր և գունագեղ նկարիչ

Ամենաարագ ոգեշունչ գրիչ, գունեղ գրագիր և գունագեղ նկարիչ

ՎԱՂՎԱՐՈՒՅԺՈՎ ԱՆՈՒՆ

Ս. Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հրատարակ է 40 կոպեկով

Ներկայացնում Ս. Ավետիսյանի վաճառքում Էդիսոնի ձայն գրող գրիչների գործարանի գործակալ Ս. Ալեքսանդրի մոտ։ 52—52 (Ը.)

ԳԻՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Ստանում է բոլոր տեսակի գինիներ, կոնյակներ, գինեքարեր, գինեքարի ալյուր, գինեքարի թթու, գինեքարի ալյուրի թթու, գինեքարի ալյուրի թթուի աղ, գինեքարի ալյուրի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթու։

Գինեքարի ալյուրի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղի թթուի աղ։

Գինեքարի ալյուրի թթուի աղ